

էր, որ նրանք ժամանակաւոր փառքի, ի ցոյց մարդկանց և նիւթական շահի համար չէին գրում և գործում:

Քեդրգ Ախվերդեանը բժիշկ էր մասնագիտութեամբ, բայց հրքան մեծ է նրա արժանիքը մեր լանաւոր դաւանութեան համար: Նա առաջինը ուշադրութիւն դարձրեց մեր աղուղների երգերի վրայ, ժողովեց ահագին նիւթ, հրատարակեց Սայաթ-Նովայի երգերը և կենսագրութիւնը: Նրանից յետոյ Միքայէլ Միանասարեանը լիովին իրագործեց Ախվերդեանի սկսած իւր «Քնար Հայկական» միանգամայն թանկագին երգարանով: Այժմ Ախվերդեանի դուստրը գալիս է ամբողջացնելու և լոյս աշխարհ հանելու իւր անուանի հօր գործը: Այս բաւականին մեծ հատորի մէջ մտել են և այնպիսի աղուղների երգեր, որոնք արդէն յայտնի են, իսկ գրքի մեծ մասը բռնում են համարեա թէ բոլորովին անյայտ աղուղների գրութեան: Բացի Նիրանու, Ազբար Ադամի, Թուրինջի և Շիրինի երգերը մնացածները համարեա անծանօթ աղուղներին են պատկանում: Այսպէս օրինակ ժողովածուի մէջ տեղ են գտել Արազու Սարգսի, Արտեմի, Քեանհանի, Նալբանդողլու, Ռոստոմ Մադաթովի, Մաղուբողլու, Ալվա օղլու, Բուդաղ օղլու, Սէֆիլ Զաքարի և այլոց ոտանաւորները: Գրքի մէջ չկայ ոչ միայն կենսագրական տեղեկութիւններ, այլ շատ աղուղների հօր անունը և ազգանունը յայտնի չէ: Չի կարելի ասել, որ այս անյայտ աղուղների երգերը առանձին ուժի կամ տաղանդի կնիք կրելիս լինին մինչև այսօր յայտնի աղուղների երգերի համեմատութեամբ: Աւելի ճիշտ է, որ սրանք աւելի թոյլ են քան Սայաթ Նովայի և Միսկին Բուրջու ու ուրիշների գրութեան: Սակայն լեզուի ուսումնասիրութեան տեսակէտից և բանաւոր գրականութեան նշխարները կորստից ազատելու նկատմամբ օրիորդ Ախվերդեանի ձեռնարկութիւնը երախտագիտութեան արժանի գործ է:

Գառ. Ենգիբարեանց

Н. МАРРЪ. Арабское извлечение изъ сирійской хроники Марибаса. С. Петербургъ 1902

Անխոնջ գիտնական և համակրելի հայագէտ Ն. Մառը շարունակ հետազօտելով և գիտնական ուղեւորութիւններով

համարեան իւրաքանչիւր տարի մի նոր լոյս է սփռում հայ մատենագրութեան այս կամ այն մութը մնացած և չպարզուած կամ ուրիշներից սխալ բացատրուած խնդրի վրայ:

Այս անգամ յարգելի գիտնականը մի այնպիսի խնդիր է շօշափել, որ միայն զուտ լեզուագիտական-մասնագիտական նշանակութիւն չունի, այլ մեր անցեալի ամբողջ պատմութեան հետ սերտ կապ ունի և հետաքրքրական է իւրաքանչիւր փոքր ի շատէ մտաւոր հասունութիւն ունեցող հայ անհատի համար:

Յայտնի է, որ մեր պատմահայր Մովսէս Խորենացին հայոց պատմութեան սկզբնական շրջանների մասին խօսելով՝ ամենաէական աղբիւրն է անուանում Մարիբասի կամ մարաբասի պատմութիւնը և ահագին քանակութեամբ հատուածներ է առաջ բերում՝ իբրև Մարիբասի գրքից հանուած կամ քաղուած: Այս հատուածներն այնքան շատ են, որ հայագէտ ֆրանսիացի Վիկտոր Լանգլուան հաւաքելով՝ մի ամբողջութիւն կազմեց և իբրև առանձին գիրք հրատարակեց՝ ֆրանսերէն թարգմանութեան հետ՝ իւր յայտնի «Հայաստանի հին և նոր պատմիչների հաւաքածու»-ի (Collections des Historiens anciens et modernes de l'Arménie) հրատարակութեան մէջ *):

Սակայն գիտնականներից ոմանք Լանգլուայինման լաւատեսութեամբ չվերաբերուեցան Մ. Խորենացու բոլոր ասածներին և ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մարիբասի անունով ոչ մի աշխատութիւն չկայ ընդհանուր պատմական գրականութեան մէջ, հնթադրեցին, որ Մարիբասի պատմութիւնը միմիայն Խորենացու հնարածն է. Մարիբաս չի եղել և չկայ. Խորենացու երևակայութեան ծնունդ է այն բոլորը, ինչ որ պատմում է նա Մարիբասի անունով, որպէս զի իւր ասածներն աւելի կշիռ ունենան ընթերցողների համար:

Մարիբասի գոյութեան խնդիրը կապուել էր Մ. Խորենացու պատմածների վաւերականութեան և տառնեակ դարեր ամբողջ ազգի վստահութիւնը վայելող ծերունազարդ հեղինակի հշարտախօսութեան խնդրի հետ:

Որչափ էլ դժուար էր բացատրել՝ թէ ինչպէս կարող էր

*) „Mar Apas Catina, Histoire ancienne de l'Arménie, extraite de l'histoire des premiers ancêtres, traduite de chaldéen en grec par ordre d'Alexandre—le grand, et conservée en partie par Moïse de Khorène etc». Paris, MDCECL XVII.

Խորենացիին իրենից պատմագիր և ամբողջ պատմութիւն հնա-
րել, քանի որ իւր ժամանակակից մարդիկ կարող էին այդպիսի
խարդախութիւնը բանալ, այնուամենայնիւ գիտնականներից ու-
մանք (մերայիններից՝ ի միջի այլոց պրօֆ. Ք. Պատկանեանը)
ապացոյց բերելով Խորենացու Մարաբասին վերագրած ժամա-
նակն ու հանգամանքների անճիշտ լինելը՝ բոլորովին մերժում
էին ընդունել, ինչպէս ասացինք, Մարաբասի գոյութիւնը:

Խնդիրն այս անորոշ դրութեան մէջ էր, երբ 1896 թ. հրա-
պարակ եկաւ այն հետաքրքրական նորութիւնը, թէ Փարիզում
գտնուել է Մարիբաս Քաղդէացու ժամանակագրութիւնը: Այս
լուրը ճշտուեց և մեծ ուրախութիւն պատճառեց Խորենացու
վաւերականութիւնն ընդունողներին: Սակայն Փարիզի հայա-
գիտութեան ուսուցչապետ Carrière-ը համառօտ տեղեկութիւն
տալով Վիէննայի «հանդէս ամսօրիայում» նոր գիւտի մասին,
դարձեալ ենթադրում էր՝ թէ այս գիւտն ևս նոր այժ է տալիս
Խորենացու վաւերականութիւնը կասկածողների կարծիքներին:
Կարիէրը խոստացաւ շուտով հրատարակել իւր ուսումնասիրու-
թիւնը Մարիբաս Քաղդէացու նորագիւտ ժամանակագրութեան
մասին, բայց դժբաղդաբար շուտով ինքը վախճանուեց և մենք
դարձեալ պարզ գաղափար չկարողացանք կազմել նորագիւտ
ձեռագրի էութեան և արժէքի մասին:

Այն, ինչ որ խոստացաւ Կարիէրը, այսօր տալիս է մեզ
հայագէտ ուսուցչապետ Մառը:

Նորագիւտ ձեռագիրը ոչ թէ Մարիբասի ժամանակագրու-
թեան ասորներէն ընագիրն է, այլ այդ բնագրի քաղուածքը՝
արաբներէն լեզուով: Պրօֆ. Մառը Պետերբուրգի համալսա-
րանի միջոցով բերել տալով ձեռագիրը Պետերբուրգ՝ ուսում-
նասիրում է այդ վաւերագիրը և այդ մասին զեկուցումն կար-
դում ուսաց կայսերական հնագիտական ընկերութեան արեւ-
ելեան բաժնի 1902 թ. փետրուարի 21-ի նիստին. ահա այս
զեկուցումն է մեր ձեռքի տպագրուած բրօշուրը:

Պրօֆ. Մառի զեկուցումից երևում է, որ Մարիբաս Քաղ-
դէացու ժամանակագրութեան արաբներէն քաղուածքի նորա-
գիւտ ձեռագիրն արտագրուած է 1889 թուին, բայց ինչպէս
մի քանի հանգամանքներից երևում է, այն օրինակը, որից ար-
տագրուած է, բաւականին հին ձեռագիր պէտք է լինի և չառ
սեղեր խանգարուած: Քաղուածքի Փարիզի ձեռագիրն ընդա-
մենը տասն երեսից մի փոքր անկի է in-fº, սկսւում է ներ-

բովթի մասին խօսելով և վերջանում՝ Կոստանդինի մայր Հեղինէի ձեռքով Փրկչի խաչը գտնելու պատմութեամբ: Այս քաղաածքից արդէն երևում է, որ բնագիրն ընդարձակ ծրագրով գրուած ընդհանուր պատմութիւն է եղել, որի մէջ բացի քաղաքական դէպքերից տեղ են գտել նաև Պղատոնի փիլիսոփայութեան, Սեւակեան շրջանի, Հրէաստանի եօթն աղանդների — Գրիստոսի ժամանակ — և այլ քաղաքակրթական համագամանքների մասին:

Արաբական բնագիրը թարգմանուած է ասորերէնից ու գրուած է նոյն իսկ ասորերէն տառերով: Այս կէտն, ասում է պրօֆ. Մառ, զգալի հարուած տուեց այն ծայրահեղ ուղղութեանը՝ Խորենացու հայոց պատմութեան քննադատութեան վերաբերութեամբ, որ այն բոլորը, ինչ որ ցայժմ յայտնի եղած պատմագրերի մէջ չկար, համարում էր Խորենացու հնարած կամ խարդախած անվաւեր նիւթ:

Մ. Խորենացու վերաբերեալ այս անվստահութիւնը վերջերս սկսել էին և մասնաւոր դիպուածներով արաայայտել. այսպէս օրինակ Մ. Խորենացին Հերովդէսին անուանում է կրկնակի անունով՝ «Հերովդէս Ագրիպա». պրօֆ. Կարիէրը այս դէպքը մեր պատմագրի հնարածն էր համարում, որովհետև ուրիշ պատմագիրներ Հերովդէսին Ագրիպա չեն անուանել: Մարիբասի ժամանակագրութեան քաղուածքն այժմ ապացուցանում է Խորենացու ճշտութիւնը, որովհետև նորագլուտ ձեռագրում Հերովդէսի անունը կրկնակի է գրուած, այսինքն ինչպէս Խորենացին է գրել. «Հերովդէս Ագրիպա»:

Խորենացին խօսելով Արգարի ամուսին Հեյլինէի մասին, քրիստոնեայ է անուանում նրան ու թագուհի Միջագետաց: Կարիէրն ուզում էր ապացուցանել, որ Խորենացու ասածները ճիշտ չեն ու հիմնւում են Սևեռիոսի եկեղեցական պատմութեան մի սխալի վրայ: Կարիէրի ասելով Հեղինէն ոչ թէ Միջագետքի, այլ «Ադիաբենի թագուհի» էր և ոչ թէ քրիստոնեայ, այլ հրէայ:

Այժմ պարզւում է, որ Խորենացին չէ միայն այդպէս ասողը, այլ ինչպէս երևում է արաբերէն քաղուածքից, Մարաբասի ժամանակագրութիւնն էլ նոյնն է յայտնում:

Մարիբասի ժամանակագրութեան քաղուածքն աւելի մեծ նշանակութիւն է ստանում հայոց պատմութեան սկզբնական շրջանի վերաբերմամբ:

Հայոց հնագոյն պատմութեան համար հայոց լեզուով երկու աղբիւր ունինք. Անանունը և Մ. Խորենացին. երկուսի մէջ էլ իբրև հիմնական և հեղինակաւոր աղբիւր է յիշում Մարիբասը: Պրօֆ. Մառը կարծիք էր յայտնել, որ Անանունի աշխատութիւնն հայոց սկզբնական պատմութեան ասելի հին մշակումն է. այժմ Մարիբասի քաղուածքը հաստատում է պրօֆ. Մառի ենթադրութիւնը: Մարիբասի պատմական կարգաւորութեանն ասելի մօտ է Անանունը, քան Խորենացին: Մարիբասը, ինչպէս և Անանունը, ասում է, որ հայոց առաջին թագաւորներն երեացին Արշակունիների Պարսկաստանում հաստատուելուց անմիջապէս յետոյ. իսկ Խորենացին սրանց համարում է հայոց թագաւորների երկրորդ հարստութիւնը, որովհետև առաջին թագաւորները հայկազանց ցեղից էին: Անանունը թէև նոյնպէս յիշում է հայկազանց, բայց ոչ իբրև թագաւորներ:

Անանունի ասելով հայոց առաջին թագաւորներն Արշակունիներն են և ծագում են պարսից Արշակունիներից. առաջին թագաւորը կոչւում էր Արշակ (ըստ Խորենացու Վաղարշակ), այն ինչ Մարիբասն այս հարստութեան առաջին թագաւորին «Կեսրա» կամ «Կասրէ», այսինքն Խոսրոսով անունն է տալիս և գլխաւորն այն է, որ Մարիբասի քաղուածքը հայոց այս թագաւորներին Արշակունի չէ համարում, այլ վրաքնակ թուրքեր: Պ. Մառը հետևեալ խօսքերով է առաջ բերում Մարիբասի քաղուածքի այդ հատուածը. «... Հայերը երբ տեսան, որ Պարթևներն իրենց համար թագաւոր ունեցան, իրենք էլ թագաւոր նշանակեցին Մեծ Հայաստանում իրենց համար «Կասրէ», այսինքն Խոսրովին: Դրանք թուով իննը թագաւորներ էին մի ցեղից. սրանք այն թուրքերն են, որ Վրաստանում են ասլրում...»:

Խորենացու քննադատները մեծ պատմագրի մեծ խարդախութիւններից մէկն էին համարում և այն հանգամանքը, որ նա Նդեսիայի թագաւորներին հայացրել է. այժմ նոյնը հաստատում է և Մարիբասի քաղուածքը, որ Արգաւրին ուղղակի անուանում է հայոց թագաւոր: Անվաւեր էր համարում նաև Խորենացու յիշած Արգաւրի նամակագրութիւնը Յիսուս Քրիստոսի հետ. այժմ տեսնում ենք, որ Մարիբասի արաբերէն քաղուածքը նոյնպէս ասում է. «Արգաւրը թագաւորեց հայոց վրայ Նդեսիայում, նամակ գրեց Քրիստոսին»:

Մարիբասի քաղաքը յիշում է և հայոց թագաւոր Արտաշէն, որ Կոստանդիանոսի ժամանակակից էր. ակնյայտնի է, որ այս Արտաշէն Խորենացու և Անանունի Տրդատը պէտք է լինի:

Վերոյիշեալ փաստերն արդէն պարզ ապացոյց են, որ Խորենացու վրայ բարդած մեղադրանքներից շատերը վերանում են. դոնէ այսքանն ակնյայտնի է այժմ, որ Խորենացին ինքը չէ ստեղծել Մարիբասի պատմութիւնը, այլ եղել է այդ հեղինակի անունով մի ժամանակագրութիւն, որից օգտուել են թէ Անանունը և թէ Խորենացին:

Այժմ հարց է ծագում. ո՞վ էր Մարիբասը և երբ է գրել իւր ժամանակագրութիւնը: Ինչպէս գիտենք, Խորենացու ասելով Մարիբասն ապրում էր Վաղարշակ թագաւորի օրօք, այն ինչ, Մարիբասի քաղաքից վերը տեսանք, որ նրա պատմութիւնը հասնում է մինչև Կոստանդիանոս և մեր Տրդատ թագաւորների օրերը:

Ահա մի նոր առեղծուած:

Պրօֆ. Մաւր ենթադրում է, որ Մարիբաս, Մարբաս, Մարբա կոչուած հեղինակը ոչ այլ ոք է, եթէ ոչ Նեստորականների Մար-Աբա կաթողիկոսը, որ վախճանունց Բրիտոսի 552 թուին:

Այս Մար-Աբան ծագումով պարսիկ է, քրիստոնէութիւն ընդունելով գնում է Մծբին՝ ուսանելու. այդտեղից գնում է Նդեսիա, ուր սովորում է յունարէն յայտնի յունագէտ Թոմայի մօտ: Այնուհետև ճանապարհորդում է Կոստանդնուպօլիս, որտեղից փախչում է՝ նախատեսելով Նեստորի դատապարտութիւնը և գալով Մծբին՝ ուսուցանում է: Պաւղոս կաթողիկոսի մահից յետոյ (536 թ.) յաջորդում է Մար-Աբան և հիմնելով Վամ վերանորոգելով Սեւկեայի դպրոցը, ուսուցանում է այդտեղ. բայց զօրօաստրի ուսման դէմ յանդուգն գրելու կամ քաղաքիւ պատճառով՝ Խոսրով Ա. (531—579) աքսորում է նրան Ադրբէյջան և Սեւկեան եկեղեցին անբուժ: Կաթողիկոսը համարձակութիւն է ունենում Սեւկեի վերադառնալու, բայց արքայի հրամանով բանտարկւում է և բանտումն էլ վախճանւում 552 թուին:

Պրօֆ. Մաւր այս ենթադրութեամբ (եթէ չենք սխալւում Մարիբասին ասորի գիտուն համարող ենթադրութիւնը նոր չէ, այլ սկիզբն է առնում Քատրմէր հայագէտից) խնդիրը նորից

կնճռոտ կերպարանք է ստանում. արդեօք նեստորական կաթողիկոս Մար-Աբայի գրութեան է «Ժամանակագրութիւնը». թէ միայն նրան են վերագրել:

Եթէ Մար-Աբան վեցերորդ դարու հեղինակ է, ուրեմն Անանուէն ու Խորենացին միեւնոյն կամ աւելի ուշ ժամանակի պատմադիրներն են:

Ինչո՞ւ և ի՞նչպէս է Խորենացին իւր ժամանակակից մի հեղինակի գրութեանը տանում հասցնում Վաղարշակի օրերը...: Գորդեան հանգոյցը չլուծուեց:

Բ. Ի. Կ.

Dr. Antonius. Վարդապետ. Լեհաստանի հայերի պատմութեան վերջին երեսը. Թարգ. Մ. Բարխուդարեան: 8^o 47 էջ. Բագու 1903 թ. գ. 20 կ.:

Հայոց պատմութեան տխուր էջերից մէկն է Լեհաստանի հայ գաղթականների դաւանափոխութիւնը և ապա համարեա՞ թէ ամբողջովին ոչնչացումը: Բացի տխուր լինելուց այս դաւանափոխութեան իրողութիւնը նոյն իսկ զգուշիւ է, որովհետեւ տեղի ունեցաւ ընձի կերպով, առանց ժողովրդի ցանկութեան ու հաճութեան: Կաթողիկոսութիւնը վիժեց Նիկօլ անուշով դաւաճանին, որ մի ամբողջ ժողովրդի կորստեան պատճառ եղաւ: Լեհաստանի հայ ժողովրդի կաթոլիկ դառնալու պատմութիւնը, որ հրատարակեց պ. Կ. Սպեանը «*Ընձի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ*» անունով, մանրամասն նկարագրում է կաթոլիկների լարած որոգայթները՝ բռնի կերպով իւր հարազատ եկեղեցու գրկից դուրս խելու հայրենի օջաղից հեռացած մի բաւուն ժողովրդին, որ օտար պետութեան մէջ անգամ ապրում էր իւր ազգային, անկախ սովորութիւններով և նոյն իսկ սեպական օրէնսդրութեամբ, որ վաւերացուած էր լեհացի Թագաւորներից և կառավարութիւններից:

Նրբ Կամենեց քաղաքի հայերը դեռ քաջութեամբ դիմագրում էին դաւաճան Նիկօլի ապօրինի հրամաններին և պաշտպանում իրենց հարազատ, դարերով պաշտած ու սիրած, կաթողիկոսութիւնից շատ աւելի ազատ սկզբունքների վրայ հիմնուած և ներդաւար եկեղեցին, հանդէս եկաւ այդ քաղաքի հայոց